


Գիտություն



ՀԱՅԵՍՏԱՆԻ
№ 8 (185)
2005թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԵԾ ԴԻՏԱԿԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Հաշվի առնելով Երևանի խորհրդի 15.09.2005 թ. N 17/6 որոշումը.
1. Երևանի Դավիթաշենի 3-րդ փողոցն անվանակոչել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 1950-1955 թթ., 1971-1975 թթ., 1981-1986 թթ. ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ Անդրանիկ Ղևոնդի Իսախանյանի անվամբ՝ «Անդրանիկ Իսախանյանի փողոց» (Դավիթաշեն բաղային համայնք):
2. Առաջարկել Դավիթաշենի բաղապետարանին ապահովել նոր փողոցի անվանումով ցուցատախտակների և քվադրանցների տեղադրումը:
3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանը՝
3.1. Կատարել համապատասխան ձևակերպումներ, վերանայել ու հստակեցնել նոր անվանումով փողոցի վրա գտնվող շենք-շինությունների փոստային հասցեները և մինչև 2005 թ. դեկտեմբերի 1-ն ավարտել հասցեավորումը:
3.2. Ճշտված հասցեավորման ցանկի մեկական օրինակ տրամադրել:
ա) ՀՀ ոստիկանության Դավիթաշենի անձնագրային բաժնին
բ) «Երբաղտեղեկանք» ՊՓԲԸ-ին
գ) «Հայփոստ» ՊՓԲԸ-ին:
4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի և տեղեկատվության վարչությանը սույն որոշումը լուսաբանել զանգվածային լրատվության միջոցներով:
5. Առաջիկա դրոշման կառավարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպչական բաժնի վրա:
6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Կոչեջյանի վրա:


ՎԵՆԵՏԻԱ. 20-ամյա հոբելյան

Համազգային շուրջ մեկ Կենտրոնի Կա Ֆոսկարի Համալսարանի Հայ Լեզվի և Մշակույթի ամառային խտացված դասընթացի 20-ամյակը:
Օրինության գրեթե և շնորհավորական ուղերձներ էին հղել եկեղեցական ու քաղաքական իշխանությունները. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Յայոց, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Ն.Գ.Յ. Ներսես Պետրոս ԺԺ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիո Կաթողիկոս Յայոց, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Չարությունյանը, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Դավիթ Չովեյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, ակադեմիկոս, պրոֆեսոր, Երևանի պետական լիսնսիումի ղեկավար Ռադիկ Մարտիրոսյանը, պրոֆեսոր, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը, պրոֆեսոր, ՀՀ ՄԻՈՒՆ-ի նախագահ Եսու Վալտերբերգը, պրոֆեսոր, հայագիտական ուսուցման ընկերության նախագահ ԱՄՆ-ում, Ռոբերտ Քեշիշյանը՝ նախագահ ԱՄՆ-ի հայագիտական ուսման ընկերության, Կա Ֆոսկարիի եվրասիական ուսուցման բաժանմունքի տնօրեն Ռիկարդո Չիպոլը, պրոֆ. Կա Ֆոսկարիի միջֆակուլտետային լեզվական կենտրոնի տնօրեն Դարիոյ Կալիմանը:
Հանդիսությունները բացվեցին համալսարանի Կա Դոլֆին շենքի հոյակերտ դահլիճի մեջ՝

ղեկավար պրոֆ. Պիեր Լուիջի Գետտի ուղերձով, որը պարզաբանեց դասընթացի դերն ու մշակույթում Կա Ֆոսկարիի գիտահետազոտական ու ուսուցողական շրջանագծի մեջ: Նրան հետևեցին օրինության և շնորհավորական հեռագրերը: Ապա բեմ ելավ օրվա գլխավոր բանախոս պրոֆ. Մարկ Նշանյանը, որ «Աքսորյա» մշակույթ, թե՛ աքսորի մշակույթ» խորագրի տակ հանգամանորեն վերլուծեց դասընթացի իմաստն ու գործառույթը հայ կյանքում ու մշակույթի մեջ:
Երկրորդ օրը հանդես տեղի ունեցավ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի գեղաշուք «Հայելիների դահլիճում»: Բացման խոսքով հանդես եկավ պրոֆ. Վ. Բարխուդարյանը, որը վեր հանեց դասընթացի դերը հայագիտության ընդհանուր շրջագրի մեջ, օրինակներ հիշելով այդ դասընթացի անցած և այսօրվա հայագիտության մեջ ուսուցանող կամ ամբիոններ վարող անուններ և մյուս կողմից այն նկատելով իբրև միաբար զօդ հայերու մեջ սփյուռքում և միանգամայն կամուրջ հայրենիք-սփյուռքի միջև: Ապա Դ. Լ. Ջեքիեանը հակիրճ բացատրություն տվեց մասնավորապես հեռանկարով, այս քսան տարիների ընթացքում դասընթացը ներշնչած ու ղեկավարող մայր գաղափարի ու տեսլականի մասին:
Հայ լեզվի և մշակույթի խտացված 20-րդ դասընթացի հաջորդ արձանագրությունները կբացվեն 2005 թ. նոյեմբերի կեսին:
Պր-Արաքս մշակութային ընկերակցության դիվան

Յուրի ԱԼԵԽՍԱՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ հայ ժողովրդի հպարտությունն ու հարատևումն է



Կարդալով 2005թ. ապրիլի 12-ի «Նույն վրեժն» թերթում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գրիգոր Գուրգադյանի «Մտորումներ Գիտությունների ազգային ակադեմիայի ավերակների վրա» հրապարակված հոդվածը, ակամայից ապշում ես. ինչպե՞ս կարելի է վերաբերվել նրա «Ներկայիս Գիտությունների ազգային ակադեմիան ցրելու, լուծարելու» առաջարկին:
Հանրապետության գիտական հասարակայնությանը քաջ հայտնի է, որ արդեն 1992թ-ից քննարկվել են Հայաստանի ԳԱ-ում բարեփոխումների հիմնական սկզբունքները: Այս տեսանկյունից քննարկվել է նաև Գիտությունների ակադեմիայի անդամության երկաստիճան համակարգի (իսկական անդամ եւ թղթակից անդամ) միաստիճանայինի (ակադեմիկոս) անցման հարցը: Եվ Հայաստանի կառավարության որոշումը 1994թ. ընտրություններ անցկացնելու մասին, երբ բոլոր թղթակից անդամներին իրավունք էր տրված

ընտրվել իսկական անդամ (անհանգրվան մրցույթի, սակայն գաղտնի քվեարկությամբ) հենց հետապնդում էր նպատակ՝ իրագործել անցում ՀՀ ԳԱԱ անդամության միաստիճանային համակարգի: Ընտրություններին մասնակցած բոլոր թղթակից անդամները կարող էին ընտրվել ակադեմիկոսներ, սակայն միայն մի փոքր մասը ընտրվեց իսկական անդամ: Թղթակից անդամների բացարձակ մեծամասնությունը չընտրվեց ակադեմիայի բաժանմունքներում, իսկ թղթակից անդամներից երեքը՝ ԳԱԱ ընդհանուր ժողովում: Նրանցից մեկը՝ տողերիս հեղինակը, իսկական անդամ ընտրվեց բնական գիտությունների բաժանմունքում, ուղղվածությամբ մոտ կանգնած մասնագետների կողմից (ակադեմիկոսների 7 ծայր. կողմ, 1 -դեմ): Սակայն, գիտական ուղղվածությամբ բացարձակապես հեռու ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական, ինչպես նաև հումանիտար գիտությունների բաժանմունքների ակադե-

միկոսների մասնակցությամբ ԳԱԱ ընդհանուր ժողովում, անվավեր քվեաթերթիկը (քվեարկողը չէր ջնջել ոչ կողմ, ոչ դեմ) խանգարեց ընտրությանը, չնայած նրան, որ քվեարկությանը մասնակցած 34 ակադեմիկոսներից 17-ը քվեարկել էր կողմ, իսկ 16-ը՝ դեմ: Ակամայից հարց էր ծագում արդյո՞ք տրամաբանությանը և առողջ բանականությանը չի հակասում այն իրավիճակը, երբ չինչած ծայրը հաշվարկվեց ցուցակային կազմում ընդգրկված ակադեմիկոսների հնչած ծայրերի հետ մեկտեղ և այդպիսով, փաստորեն հավասարեցվեց «դեմ» ծայրին: Քվեարկած անձին արժեք հաշվել ցուցակում միայն այն դեպքում, եթե անվավեր քվեաթերթիկում ջնջված լինեի և՛ «կողմ», և՛ «դեմ»: (Կարծում եմ, ԳԱԱ ընտրությունների ժամանակ մեծ թյուրիմացությունից խուսափելու համար այս հարցում անհրաժեշտ է մտցնել լիակատար պարզություն): Մի քանի տասնյակ թղթակից անդամներ, ընտ-

րություններին թույլ տրված անարդարություններից խիստ վրդովված, դիմեցին մասնախագահին:
Ինչպես ցույց տվեց կյանքը, 1994թ. նոյեմբերի ընտրությունները միանշանակ վկայում էին ՀՀ ԳԱԱ անդամության մեծ ընտրությունների միջոցով միաստիճանային համակարգին անցնելու ծայրահեղ բարդության և տևականության մասին: Այդ գործընթացը կարող էր ձգձգվել տասնյակ տարիներ (մինչև վերջին թղթակից անդամի կյանքի վերջը):
1996թ-ի փետրվարի 16-ին ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, կտրելով գործյան հանգույցը, գրեթե միաձայն արմատական որոշում ընդունեց երկաստիճան համակարգից միաստիճանայինի անցնելու մասին, որի համաձայն բոլոր թղթակից անդամները համարվեցին ակադեմիկոսներ: Հարկավոր է ընդգծել, այդ որոշման նպատակը ԳԱԱ անդամության հենց միաստիճանային համակարգի անցնելն էր, > 3

1991 թ. անկախ պետականության վերականգնումից հետո հայագիտության բոլոր բնագավառներում (պատմագիտության, գրականագիտության, փիլիսոփայության, արվեստաբանության և այլն) դրվեց բաղադրական կապանքներից ձերբազատված, անաչառ հետազոտություններ կատարելու հրամայականը: Հայաստանում և արտերկրում գործող հայագիտական գանձազան կառույցների աշխատանքները համադրելու մտահոգությամբ տարբեր հայագետների կողմից շրջանառություն հանվեց նաև *հայագիտական կենտրոն* ստեղծելու ծրագիրը:

Սակայն առաջին հայացքից այնքան անհրաժեշտ և գայթակղիչ թվացող այդ գաղափարը տարիներ շարունակ մնաց թղթի վրա: Կենտրոնի նման «ճակատագիրը» հետևանք էր այն

նազան բուհերի հումանիտար ամբիոններում մի քանի հայագետ-արևելագետներից բաղկացած խմբեր են, որոնց մի մասը պահվում է մասնավոր անձանց դրամական ներդրումների հաշվին: Բնականաբար, նման պայմաններում այդ կառույցների գործունեությունը կարող է և չծառայել հայագիտության խնդիրներին և անգամ ուղղվել նրա դեմ: Նման «կենտրոնների» միավորումը ստեղծվելիք համահայկական կենտրոնի մեջ, կամ նույնիսկ նրա գործունեության համադրումը այլ կառույցների հետ ոչ միայն նպատակահարմար չէ, այլև անհնարին է: Ավելացնենք նաև, որ արտերկրի հայագետներին նոր կենտրոնի գաղափարը հոգեհարազատ չէ նաև այն պատճառով, որ հայրենիքում ստեղծված համանման հաստատության հետ համագործակցությունը,

առաջարկությունները:

1. Մեկ համահայկական խոշոր կենտրոնի փոխարեն ՀՀ ԳԱԱ Հայագիտական բաժանմունքին (նախկին հումանիտարի փոխարեն ստեղծված) կից ստեղծել «Հայագիտական աշխատանքների համադրման կենտրոն» (այսուհետև՝ ՀՀԿԿ):

2. ՀՀԿԿ-ը, որը պետք է ունենա 4-5 աշխատակից, իրականացնելու է միայն տեղեկատվական-խորհրդատվական գործառնություն, որի համար ՀՀ ԳԱԱ նախագահության տրամադրության տակ եղած տեխնոլոգիական միջոցների հիման վրա ստեղծվելու է ինքնուրույն բազա՝ ինտերնետային լայն ցանցով, էլեկտրոնային փոստով՝ կապված ամբողջ աշխարհի հայագիտական հաստատությունների և անհատ-գիտնականների հետ:

3. ՀՀԿԿ-ը ինտերնետում ունենալու է առանձին կայք, որի մեջ անգլերեն և հայերեն լեզուներով տեղադրվելու են աշխարհի հայագետների աշխատությունների, նրանց գործունեության, համատեղ ծրագրերի, գիտաժողովների մասին տեղեկություններ: Փաստորեն այդ կայքը դառնալու է յուրահատուկ համահայկական հայագիտական տեղեկատվական ամսագիր: ՀՀԿԿ-ը հատուկ ուշադրություն է հատկացնելու ինտերնետում հայկական հարցին, հայոց ցեղասպանությանը, հայ ժողովրդի պատմության կարևորագույն այլ հիմնախնդիրներին մոլորված նյութերի տեղադրման խնդրին:

4. Բացառիկ կարևորության հայագիտական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել Համահայկական հայագիտական հիմնադրամ:

5. ՀՀ ԳԱԱ Հայագիտության բաժանմունքի մեջ միավորել «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող կազմակերպությունը»՝ վերջինիս ազգօգուտ հետազոտ գործունեությունն ապահովելու համար հայթայթել ֆինանսական միջոցներ: Մերո կապեր հաստատել ԵՊՀ-ում և այլ բուհերում գործող հայագիտական ամբիոնների, լաբորատորիաների ու այլ օղակների հետ: Կրթության և գիտության նախարարության Հայագիտության փորձագիտական հանձնաժողովի և ՀՀԿԿ-ի միջոցով համադրել հայագիտական աշխատանքների թեմատիկան (աշխատություններ, ատենախոսություններ, ծրագրեր, նախագծեր, գիտաժողովներ և այլն):

6. Հայագիտական աշխատանքների համադրման կենտրոնի ստեղծումը ֆինանսական լուրջ ներդրումներ չի պահանջում: Սակայն այդպիսիք ողջ ոլորտի առողջացման համար անհրաժեշտ են: Համոզված ենք, որ դա պետք է իրականացնել հատկապես հայագիտական հաստատություններում, որոնց աշխատակիցները գրեթե զրկված են գրանտային ծրագրերով ֆինանսական միջոցներ ստանալու հնարավորությունից: Ուստի այդ բնագավառից արդյունավետ աշխատանք ակնկալելու համար անհրաժեշտ է կտրուկ բարձրացնել հայագետների աշխատավարձը, բարելավել նրանց աշխատանքային պայմանները, ավելացնել նպատակային ծրագրերի ծավալները:

7. Հայագիտության առջև դրված գիտաքաղաքական կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հասնել վերակառուցել համապատասխան ակադեմիական ինստիտուտների գործունեությունը: Այդ նպատակով պետք է պարբերաբար շարունակել ատենադասների միջոցով կարգապահ բալաստից ազատվելու քաղաքականությունը, հրաժարվել մանրաթելայնությունից, ամփոփական կապ հաստատել հարակից ինստիտուտների և բուհերի գիտական խորհուրդների հետ՝ գիտահետազոտական թեմաների կրկնությունից խուսափելու նպատակով:

Հայագիտական ինստիտուտները երիտասարդ և որակյալ կադրերով համալրվելու նպատակով հույժ կարևոր է ակադեմիական համակարգում մեկ տարի առաջ հիմնված վճարովի մագիստրատուրայում պատմության, արևելագիտության, փիլիսոփայության, արվեստաբանության և այլ մասնագիտությունների գծով ուսումնական գործընթացի կազմակերպումը: Դա հնարավորություն կստեղծի երկու տարվա ուսումնառության ընթացքում առավել աչքի ընկած մագիստրատուրաներին ուղղակի ասպիրանտուրա տեղափոխվելու կամ հայցորդի կարգավիճակով գիտական աշխատանքի մեջ ներգրավվելու համար:

Միայն պետական գործուն աջակցությամբ կարելի է կլինի հասնել հայագիտության հարաճուն խնդիրների լուծմանը, որոնք ունեն կարևոր ռազմավարական նշանակություն հայոց պետության հզորացման և ողջ հայ ազգի ինքնության պահպանման համար:

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

Հայաստանում Հայագիտական կենտրոն ստեղծելու մասին



իրողության, որ հատկապես Հայաստանում փորձություն բռնած այդպիսի կառույցներն ու օղակները՝ ակադեմիական ինստիտուտները, բուհական համապատասխան ամբիոններն ու լաբորատորիաները և այլն, ֆինանսական համեստ ներդրումների պայմաններում էլ քիչ թե շատ արդյունավետ գործում էին՝ փորձելով իրենց գործունեությունը վերակառուցել նոր ժամանակների ոգով: Բնականաբար, տվյալ դեպքում ավելի քան 60-ամյա գիտական կենսագրություն ունեցող պատմության, գրականության, լեզվաբանության և այլ ինստիտուտների լուծարումը և դրանց փոխարինումը գրեթե բոլորին անհայտ ու անհասկանալի կենտրոնով, կլինեք աղետաբեր հայագիտության համար: Բարեբախտաբար, նման «բարեփոխման» վտանգավորությունը գիտակցվել է՝ պետական շրջանակների և՛ անգամ այն մարդկանց կողմից, որոնք հայագիտական կենտրոնի ստեղծման ջերմեռանդ պաշտպաններ էին:

Այդուհանդերձ, գործող հայագիտական կառույցների աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու, հայրենիքում և սփյուռքում հայագիտական աշխատանքները մեկտեղելու հրամայականը օրակարգից չհանեց հայագիտական կենտրոնի ստեղծման գաղափարը: Պատահական չէ, որ այդ միտքը ակտիվորեն շրջանառվեց նաև 2003 թ. Երևանում հրավիրված Հայագիտական առաջին միջազգային համաժողովում և նույնիսկ տեղ գտավ նրա ընդունված եզրափակիչ բանաձևում: Բայց այս անգամ ևս, երբ կոնկրետ հարց դրվեց ավելի հստակ ծրագիր կազմելու այդ հաստատության կառուցվածքի, գործառնությունների, նպատակների վերաբերյալ, անգամ մեր ճանաչված հայագետները դժվարացան ուրվագծել դրվելիք խնդիրների շրջանակները: Լավագույն դեպքում մասնագետների ճնշող մեծամասնությունն արտահայտվեց այդ կառույցին միայն գիտական-տեղեկատվական ու համադրիչ-խորհրդատվական գործառնություններ վերագրելու մոտեցման:

Հատկանշական է, որ մեկ համահայկական հայագիտական խոշոր կառույց ստեղծելու գաղափարը միանշանակ չընդունվեց նաև արտերկրում: Բանն այն է, որ այնտեղ «հայագիտական կենտրոններ» ասվածները վաղուց հայտնի էին՝ միայն թե միանգամայն այլ ընկալումով: Արտերկրում դրանք իրականում գա-


ամենայն հավանականությամբ, կարող է որակվել որպես մեկ բուրգից (հայոց պետության կողմից) իրենց «ազատ ու անկաշկանդ» գիտական գործունեության ասիմանափակման փորձ:

Այսպիսով, *համահայկական հայագիտական կենտրոնի ստեղծման ծրագիրն իրարեհասկան չէ*: առավել ևս, որ այդպիսի կառույց Հայաստանի Գիտությունների ակադեմիայում վաղուց գործում է: Խոսքը Հումանիտար գիտությունների բաժանմունքի մասին է, որն իր մեջ միավորում է պատմության, հնագիտության ու ազգագրության, գրականության, լեզվաբանության, արևելագիտության, արվեստաբանության, փիլիսոփայության ու իրավունքի, տնտեսագիտության ինստիտուտները և Հայոց ցեղասպանության ինստիտուտ-բանգարանը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, դեռ երեք տարի առաջ մեր կողմից արվել էր առաջարկություն՝ այդ բաժանմունքը «Հայագիտության բաժանմունք» վերանվանելու մասին:

Հօգուտ մեր այդ պնդման հավելենք, որ այդ բաժանմունքի անդամ են նաև բուհական համակարգի ճանաչված հայագետները: Բաժանմունքի շրջանակներում գործում են մասնագիտական պրոբլեմային խորհուրդները, իսկ նրա ակադեմիական ինստիտուտներում՝ ատենախոսությունների պաշտպանության հայագիտական ուղղվածության մասնագիտական խորհուրդների մեծ մասը: Արդեն մի քանի տարի է, ինչ այդ բաժանմունքի շրջանակներում փաստորեն գործում է «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հասարակական կազմակերպությունը» (ղեկավարներ՝ ճարտարապետ, դոկտ. Արմեն Հախնազարյան և վիճագրագետ Սամվել Կարապետյան), որը հսկայական աշխատանք է կատարում Հայաստանից դուրս գտնվող հայկական նյութական մշակույթի կոթողների ուսումնասիրության գործում:

Այնպես որ ամենևին էլ կարիք չկա եղած հայագիտական կառույցները քանդել և ստեղծել անհայտ նորը՝ առավել ևս երաշխավորված չլինելով ծանր հետևանքներ ենթադրող սխալներից:

Միաժամանակ, համոզված լինելով, որ հայագիտությունը, որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրամաս, լուրջ բարեփոխումների կարիք ունի, օգտակար ենք նկատում ներկայացնել հետևյալ



ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՊՈԿԱԼԻՊՍԻՍ

«Կրակե մահը կգա մեր հարազատ մոլորակի ընդերքից»

Մեր մոլորակի միջուկը անբախտելիորեն կապված է երկրի մագնիսական դաշտից: Դեռևս 17-րդ դարում նկատվել է, որ այդ մագնիսական դաշտը անընդհատ փոխվում է: Վերջին 100 տարում նրա լարվածությունը նվազել է գրեթե 5 տոկոսով: Նվազման այս օրինաչափությամբ 2000 տարի հետո այն լիովին անհետանալու է: Ի՞նչ է սա նշանակում:

Երկրամագնիսական դաշտը Երկիր մոլորակը կոսմիկական ճառագայթումից պաշտպանելու յուրահատուկ էկրան է: Եթե այդ էկրանը հեռացնենք, Երկրի վրա կթափվի ռադիացիայի հեղեղը, որը կոչնչացնի կենդանի ամեն ինչ կամ կենսոլորտում առաջ կբերի անկանխատեսելի մոտացիաներ:

Կա նաև ուրիշ վտանգ: Դեռևս 1829 թվա-

կանին դիտարկվել է, որ Երկրի ներքին միջուկը մոլորակի պտտման առանցի համեմատությամբ 252 կիլոմետրով տեղաշարժվել է դեպի Խաղաղ օվկիանոս: 1965 թվականին տեղաշարժման չափը աճեց մինչև 451 կիլոմետր:

Եթե միջուկի շարժումը դեպի երկրի մակերևույթ շարունակվի, ապա որոշ ժամանակ անց Երկիրը տիեզերական անսահմանության մեջ գլուխկոծի կտա այնպես, ինչպես ժանրության կենտրոնը խախտված հողը:

Երկրի պտտման առանցքի տեղաշարժեր միշտ էլ տեղի են ունեցել: Դա ապացուցում են պատմական բազմաթիվ վկայությունները և գիտության ժամանակակից տվյալները: Եգիպտոսում հայտնաբերվել են արևային ժամացույցներ, որոնք պիտանի են միայն այն երկրի

համար, որը գտնվում է 15 աստիճան լայնության վրա: Իսկ Եգիպտոսը, ինչպես հայտնի է տեղավորված է 25-30 աստիճան լայնության վրա:

Աստղագիտական աղյուսակները պարունակում են տեղեկատվություն այն մասին, որ հնադարյան Բաբելոնը գտնվել է շատ ավելի հյուսիսում, քան քաղաքի այսօրվա ավերակները: Այս անհամապատասխանության վրա դեռևս միջնադարում ուշադրություն է հրավիրել արաբ գիտնական Աբուլֆաթը: Ամերիկյան երկրաֆիզիկոս Ս. Օ. Քեշին հանգել է այն հետևության, որ Երկրի առանցքի վերջին տեղաշարժման արդյունքում Հյուսիսային բևեռը գտնվել է հյուսիսային լայնության 60 աստիճանում, որը 30 աստիճանով հարավ է ներկայիս առկա բևեռից: ➤ 4

➤ 1 իսկ ակադեմիկոսների թվի ավելացումը դարձավ միայն այս գործընթացի բնականոն հետևանքը: Այո, պարոն Գուրզադյանը այդ ընդհանուր ժողովում ներկա չէր, սակայն մնացած բոլոր ակադեմիկոսները բացարձակ հնարավորություն ունեին արտահայտվել ընդունվող որոշման դեմ: Եթե նրանք դա չարեցին, ապա ոչ թե «ստրկային հնազանդության» հետևանքով, ինչպես մեկնաբանում է պարոն Գուրզադյանը, այլ բացառապես այն պատճառով, որ կարողացան վեր կանգնել գոռոզամտությունից և առաջնորդվելով Գիտությունների ազգային ակադեմիայի շահերով, դրսևորեցին իմաստություն, ռեալիստականություն և պետական մոտեցում բավականին բարդ հարցի լուծ-

ակադեմիկոս, ապա այս պնդման հետ, թե, բնա, կարելի էր համաձայնել: Բայց չէ՞ որ «մեծամասնություն» և «որոշ» բառերի միջև մեծ չափերի տարածություն է և բացարձակապես անթույլատրելի է անպատասխանատվությամբ գործածել բառեր, որոնք իմաստով բացարձակապես տարբեր են:

Չի կարելի չնշել կարևոր համագամք. այդ բոլոր թղթակից-անդամները ԳԱ ընտրվել են այն ժամանակ, երբ ակադեմիայի պրեզիդենտ է եղել Վիկտոր Յամբարձումյանը, և եթե «Վիկտոր Յամբարձումյանը ստեղծել է գիտությունների ակադեմիան», ապա նաև թղթակից-անդամ ընտրված գիտնականների շնորհիվ, որոնք մի շարք տարիների ընթացքում ներդրեցին իրենց

ակադեմիայի փլուզումն է, ազգային աղետ, ողբերգություն, ապա ինչո՞ւ նա, որ այդքան մտահոգված է ԳԱ գործերի դրվածքով, ամբողջ 9 տարի հետո է միայն որոշել արտահայտվել: Թվում է, ավելի տրամաբանական կլիներ կյանքի «խոշորագույն սխալը» փորձել ուղղել ավելի վաղ:

Ակադեմիկոս Գուրզադյանը պիտի իմանար, որ եկատերինա Մեծը չէր իրագործել Պետրոս I-ի մոտ առաջացած միտքը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման մասին: 1724թ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի (այդպես է կոչվում Ռուսաստանի գիտությունների ակադեմիան մինչև 1917թ-ը, 1925թ-ին վերանվանվելով ԽՍՀՄ ԳԱ, իսկ 1992թ-ին՝ նորից Ռուսաստանի

որ պ-ն Գուրզադյանի որոշ արտահայտությունների հետ կարելի է լիովին համաձայնել: Օրինակ, այն պնդման հետ, որ «... այսօր ամենավերջին արկածախնդիրներին է պատկանում ոչ միայն պետական և տնտեսական գործունեության, այլ նաև գիտական ասպարեզը»: Կարելի է միայն ավելացնել, որ այդ արկածախնդիրներից ոմանք արդեն վաղուց և անհաջող կերպով փորձել են թափանցել ԳԱ կազմի մեջ: Նրանցից ոմանք, ում չի հաջողվել ընտրվել ԳԱ կազմում, ավելի լավ բան չեն գտել, քան վարկաբեկելու փորձ անել, հայտարարելով, թե իրեն հարգող մասնագետը չի քվեարկվի Չայկական ակադեմիայում և իրենց արժանապատվությունից ցածր են համարում դառնալ Չայաս-

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

մանը: Մասնավորապես, հաղթահարվեց 1994թ. նոյեմբերից առաջացած տարանջատվածությունը (իսկ ըստ էության՝ ձևավորվող պառակտումը) իսկական անդամների և թղթակից-անդամների միջև: Ուստի, շրջաբանելով պարոն Գուրզադյանին, կարելի է պնդել, որ Յոկսեփ Օրբելին հիմնադրեց Չայաստանի Գիտությունների ակադեմիան, Վիկտոր Յամբարձումյանը ստեղծեց Գիտությունների ակադեմիան, Ֆադեյ Սարգսյանը **պահպանեց** Գիտությունների ակադեմիան: Այդպիսին են փաստերը: Մնացածը պ-ն Գուրզադյանի հորինվածքն է:

Ավելի ուշ, 2000թ. անցկացնելով թղթակից-անդամների ընտրությունները, ՀՀ ԳԱ, ըստ երևույթին, վերջնականապես (կարելի է կարծել այն համագամքի զգալի ազդեցությամբ, որ Ռուսաստանում և ԱՊՀ մնացած բոլոր երկրներում պահպանվել էր գիտությունների ակադեմիայի անդամության երկաստիճան համակարգը) կողմնորոշվեց անդամության երկաստիճան համակարգի հաստատման ուղղությամբ: (ՀՀ ԳԱ կանոնադրությունը 2002թ, ապրիլի 29-ին հաստատվեց ՀՀ կառավարության և ՀՀ նախագահի կողմից):

Ըստ երևույթին, ակադեմիկոս Գուրզադյանը մոտ չի կանգնած տարրական հաշվարկներին: Այլապես, ինչպե՞ս կարելի է պնդել. «Այն ժամանակվա թղթակից-անդամներից մեծամասնությունը երբեք չէին դառնա ակադեմիկոսներ, բազմամյա փորձից գիտենք, որ թղթակից-անդամներից միայն չորրորդը, լավագույն դեպքում երրորդն է դառնում ակադեմիկոս»: Բայց չէ՞ որ իրավիճակը լրիվ հակառակն էր: Չայաստանի ԳԱ ողջ պատմության ընթացքում, 1943թ. նոյեմբերին նրա հիմնադրման պահից մինչև 1994 թվականի նոյեմբերը (եթե չհաշվենք 23 ակադեմիկոս-հիմնադիրներին և գիտության ու մշակույթի որոշ հայտնի գործիչներին, որոնք միանգամից ընտրվել են ԳԱ իսկական անդամներ), 100-ից ավելի, ներկայումս ողջ և վախճանված ակադեմիկոսներ սկզբից ընտրվել են թղթակից-անդամներ, իսկ հետո ԳԱ իսկական անդամներ, և միայն 40 մարդ վախճանվել են թղթակից-անդամի կոչումով: Հետևաբար, թղթակից-անդամների 70%-ից ավելին հետագայում ընտրվել են ԳԱ իսկական անդամներ: Ուստի, կարելի է եզրահանգել, որ ընդհանրապես, այն ժամանակվա թղթակից-անդամների մեծամասնությունը կղաղմային ակադեմիկոսներ: Չէ՞ որ ԳԱ իսկական անդամների շարքերը պետք է համալրվեին, և իհարկե, դրանք կհամալրվեին թղթակից-անդամների կազմից: Այսպիսին է տրամաբանությունը և ակադեմիկոսների կազմի ձևավորման անխախտ ավանդույթները ԳԱ անդամության երկաստիճան համակարգի առկայության դեպքում: Իսկ պ-ն Գուրզադյանը փորձ է արել վարկաբեկել թղթակից-անդամների գիտական հեղինակությունը և նրա բացարձակապես անհիմն կարծիքը, փաստորեն, կրում է հերյուրանքի բնույթ: Եթե նա հայտարարեր, որ այն ժամանակվա որոշ թղթակից-անդամներ երբեք չէին դառնա

ավանդը գիտությունների ակադեմիայի ստեղծման գործում:

Ի դեպ, պ-ն Գուրզադյանը, լինելով ՀՀ ԳԱ անդամության երկաստիճան համակարգի համոզված կողմնակից, մտածե՞լ է արդյոք թղթակից-անդամ և իսկական անդամ գիտնականների ընտրության չափորոշիչների հարաբերականության մասին: Տողերիս հեղինակը «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի 1996թ. մարտի 22-ի համարում գրել է. «... կարո՞ղ է արդյոք գիտնականը մի քանի տասնամյակների ընթացքում, ստեղծելով բարձր արդյունավետ աշխատանքի արդյունքում շատ արժեքավոր աշխատանքներ և 50-60 տարեկանում թղթակից-անդամ ընտրվելով, 4-8 և նույնիսկ 12 տարվա ընթացքում դրանից հետո հարստացնել գիտությունը առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող աշխատանքներով և արժանանա ԳԱ իսկական անդամ ընտրվելու բարձր պատվին: Հարցի պատասխանը միանշանակ է: Իհարկե, ոչ: Ամենար է ամհամատ ավելի կարճ ժամանակահատվածում, ավելի տարեց հասակում ստեղծել ավելի արժեքավոր աշխատանքներ: Իհարկե, գիտնականները թղթակից-անդամ ընտրվելուց հետո, որպես կանոն ավելացնում են իրենց գիտական ներուժը, սակայն մեծամասամբ դա միայն որոշակի ... հավելում է այն բանի, ինչը նրանց կողմից արդեն կատարվել է, այլ ոչ թե հետազոտությունների սկզբունքորեն նոր ուղղության մշակում»:

Որոշ երկրներում (Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) գիտությունների ակադեմիաները ունեն անդամության երկաստիճան համակարգ, մինչև ժամանակ այլ երկրների գիտությունների ազգային ակադեմիաներում (ԱՄՆ, Իտալիա և այլն) ընդունված է անդամության միաստիճանային համակարգը: Եվ խոսակցություն, այսօր, բնական է, գիտությունների ակադեմիայում անդամության միաստիճանային և երկաստիճանային համակարգերի համեմատական զնախատականի մասին չէ: Խոսքն այն մասին է, որ թղթակից-անդամների ընտրվելը իսկական անդամներ որևէ կերպ չէր կարող իջեցնել ԳԱ մակարդակը: Չէ՞ որ ակադեմիկոս դարձած բոլոր 49 թղթակից-անդամները հանդիսացել են և շարունակում են մնալ համապետությունում և նրա սահմաններից դուրս հայտնի գիտնականներ, որոնք մեծ ավանդ ունեն գիտության տարբեր բնագավառներում:

Չի կարելի չասել նաև հետևյալի մասին. ենթադրենք, 1996թ. փետրվարին թղթակից անդամները չընտրվեին ակադեմիկոսներ և չդառնային, ինչպես պ-ն Գուրզադյանն է արտահայտվում, «գեներալներ», այլ մնային «լեյտենանտներ»:

Ի՞նչը կփոխվեր: Չէ՞ որ նրանք որպես թղթակից-անդամներ կշարունակեին մասնակցել ակադեմիայի կազմի համալրմանը՝ նոր թղթակից-անդամների ընտրություններին, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների ղեկավարմանը: Ուրեմն ինչո՞ւմ է «ողբերգությունը»: Եվ ակամայից հարց է ծագում պ-ն Գուրզադյանին: Եթե թղթակից անդամների իմաստի տուտի լուծարումը, նրա կարծիքով, ա-

գիտությունների ակադեմիա) հիմնադրումը Պետրոս Մեծի խոշորագույն ծառայությունն է: Անխոս, «... արդեն 3 հարյուրամյակ, Ռուսաստանի ակադեմիան մնում է իր բարձունքի վրա»: Սակայն, չէր խանգարի հիշել, որ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան, մտահոգվելով իր բարձր հեղինակության պահպանման անհրաժեշտությամբ, որոշեց չստեղծել նախադեպ և չհեռացնել ակադեմիայի կազմից նույնիսկ այնպիսի հրեշավոր անձնավորության, ինչպիսին էր Տ.Գ. Լիսենկոն:

Ակադեմիկոս Գուրզադյանը մոլորության մեջ է, եթե կարծում է, թե Ֆրանսիայում կան 40 ակադեմիկոսներ: Ֆրանսիայի ինստիտուտը, որը հանդիսանում է Ֆրանսիայի հիմնական պաշտոնական գիտական հիմնարկը, միավորում է 5 ակադեմիաներ (Խորհրդային համագիտարանային բառարան, Մ, 1987): Նրանցից մեկը՝ Բնական գիտությունների ակադեմիան, 1983թ. իր կազմում ուներ 130 իսկական անդամ, 160 թղթակից-անդամ և 80 արտասահմանյան անդամներ:

Լայնորեն օգտագործելով հրապարակախոսության հնարավորությունները, ողջ հողվածով կարմիր թելի մեմո անցնում է հեղինակի խիստ արտահայտված ցանկությունը՝ թողնել վառ տպավորություն, արատավորել ՀՀ ԳԱ և, չխորշելով որևէ միջոցից, հասնել նպատակին՝ ընթերցողների (առաջին հերթին երկրի վերին ատյանների) մոտ ձևավորել կայուն համոզմունք «ցավոտ» հիմնախնդրի լուծման համար դիմել անհապաղ և արտակարգ արմատական միջամտության: Սակայն, չի կարելի չնշել, որ դիտարկվող հողվածի հեղինակը չի բարեհաճել ստուգելու գոնե փաստացի նյութերը: Օրինակ, 2000թ. ընտրված ՀՀ ԳԱ թղթակից անդամներից մեկի տարիքի մասին: Նշվում է, որ նա 58 տարեկան է: Իրականում, ինչպես նշված է ՀՀ ԳԱ տեղեկատվում, դա նրա ծննդյան տարեթիվն է: Իսկապես, կարելի է համաձայնել պ-ն Գուրզադյանի հետ՝ «չգիտես» ծիծաղե՞ս, թե լաց լինես»:

Պ-ն Գուրզադյանը հակասում է ինքն իրեն: Մեկ նա գրում է, որ «...մեր լավագույն երիտասարդ գիտնականներից շատերը, որոնց գիտական ծառայությունները վաղուց արժանացել են միջազգային ճանաչման, չառաջադրեցին իրենց թեկնածությունները, իրենց արժանապատվությունից ցածր համարելով հայտնվել նման ցուցակում և դառնալ նման ակադեմիայի անդամ»: Մեկ այլ տեղ նշում է «Ֆիզիկոսների ցուցակում կային գիտնականների անուններ, որոնք ձևավորվել էին մոսկովյան ֆիզիկոս-տեսաբանների հզոր միջավայրում, ունենալով միջազգային ճանաչում»: Ընթերցողին մնում է միայն զարմանալ՝ այդ տաղանդավոր գիտնականները, վերջիվերջո, մասնակցե՞լ են մրցույթին, թե՞ ոչ:

Հանուն ճշմարտության, պետք է նշել,



տանի ԳԱ անդամ:

Այո, Ակադեմիայի դռները պետք է փակ լինեն միջակությունների առջև: Այս հարցում երկու կարծիք լինել չի կարող: Անհրաժեշտ է մշակել առավել արժանի թեկնածուների ընտրության հստակ մեխանիզմ գիտությունների ակադեմիայի անդամների կազմի համալրման համար և խստորեն ղեկավարվել դրանով, որպեսզի բացառվեն սխալներ թույլ տալու հնարավորությունները: Այս տեսակետից, ըստ երևույթին, նպատակահարմար կլիներ գիտությունների ակադեմիայի թափուր տեղերի ընտրությունը կատարել ոչ շուտ, քան առաջադրված թեկնածուների ցուցակը մամուլում հրապարակելուց 6 ամիս անց: Ժամկետի երկարացումը հնարավորություն կտա ինչպես ակադեմիայի անդամներին, այնպես էլ լայն հասարակայնությանը (ոչ միայն գիտական) առավել լավ ծանոթանալ թեկնածուների հետ: Սակայն, գիտահետազոտական աշխատանքների լայնածավալ ինտենսիֆիկացիան լավագույն երաշխիքն է ինչպես համապետության տնտեսության և գիտության զարգացման գլոբալ, կարևորագույն հիմնախնդիրների լուծման, այնպես էլ ԳԱ որակի բարձրացման համար նոր անդամների ընտրման ժամանակ:

Չի կարելի չհամաձայնել ակադեմիկոս Գուրզադյանի հետ նաև հասարակական հիմունքներով ստեղծված և գործող ակադեմիաների հարցում: Սակայն, հարց է ծագում, ի՞նչ կապ ունի այստեղ ՀՀ ԳԱ-ն: Մի՞թե մեղավոր է ԳԱ-ն, որ երևան են եկել այդքան տարբեր ակադեմիաներ: Ի դեպ, շղափելով նման հարց, անհրաժեշտ է հետևել, որ ակադեմիկոս բառը կիրառվի միայն ՀՀ ԳԱ իսկական անդամների վերաբերյալ: Մնացած այլ դեպքերում ակադեմիկոս բառը գործածելիս պարտադիր պետք է նշել գիտությունների ակադեմիան, օրինակ ՀՀ ԲԳԱ ակադեմիկոս և այլն: Նախկին Խորհրդային Միությունում ակադեմիկոս ասելիս նկատի էր առնվում ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ: Եթե խոսքը գնում էր միութենական համապետությունների ակադեմիաների կամ ճյուղային ակադեմիաների մասին, ապա անպայման նշվում էր՝ Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս և այլն:

Պ-ն Գուրզադյանը հիմնավորված կարծում է, որ «այն մոայլ ժամանակներում կար միայն մեկ խնդիր. պահպանել ակադեմիայի կենսունակությունը, իսկ ➤ 4 մեծ չափով իրականում, գիտության

➤ 3 գոյությունը: Սակայն, չէ՞ որ ներկայումս այս կարևորագույն խնդիրը լիովին պահպանել է իր արդիականությունը: Բավական է միայն նշել, որ արդեն տարիներ շարունակ գիտությունը ՀՀ ԳԱԱ-ում ինչպես և ողջ Հայաստանում, գոյատևում է չնչին ֆինանսավորման պայմաններում: Իհարկե, ՀՀ ԳԱԱ նախագահության գործունեության մեջ կան որոշակի բացթողումներ, իսկ քննադատությունն, անկասկած, համոզիչ է, որ առողջ հասարակության և զարգացած պետության կարևորագույն պայմաններից մեկը: Սակայն, անթույլատրելի է, երբ քննադատությունը կրում է պարսավանքի բնույթ: Այն պետք է լինի ոչ թե նեգատիվ, այլ դրական, և հետապնդի կառուցողական նպատակներ:

կադեմիան: Ակադեմիայի առաջին կազմը, բաղկացած 23 ակադեմիկոսներից, որոնցից համարյա կեսը դոսից էին, հաստատվեց կառավարության կողմից: Նույնը պետք է կատարել և հիմա, ստեղծել նոր ակադեմիա, նոր կազմով, ընտրված և հաստատված կառավարության կողմից: Սակայն, առաջինը՝ Հայկական խՍՀ ԳԱ հիմնադրվել է ոչ թե դատարկ տեղում, այլ 1935թ-ին ստեղծված խՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի բազայի վրա: Երկրորդը՝ դոսից ոչ թե համարյա կեսն էին, այլ ընդամենը մի քանի գիտնականներ, ընդ որում՝ նրանք նույնպես մի շարք տարիների ընթացքում սերտորեն կապված են եղել Հայաստանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների հետ:

ծում»:

Հաճախ մեկնաբանվում է ակադեմիայի անդամների տարիքի հարցը: Սակայն ակադեմիական կադրերի երիտասարդացման անվերապահ անհրաժեշտության հետ մեկտեղ (այլ հավասար պայմաններում նպատակահարմար է թղթակից-անդամներ ընտրել ավելի երիտասարդ գիտությունների դոկտորներ), չի կարելի հաշվի չառնել հետևյալ հանգամանքները. եթե գիտական աշխատողը մինչև 30 տարեկանը դառնա գիտությունների թեկնածու, իսկ մինչև 40 տարեկան՝ գիտությունների դոկտոր, ապա թղթակից-անդամ նա կարող է ընտրվել 50-60 տարեկանում (մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանի գիտությունների ակադեմիայում

մահկանացու ենք, իսկ շատ ակադեմիկոսներ բացարձակ հարգալից տարիքում են, ինչպես նաև գործի դնել ՀՀ ԳԱԱ կառուցողության մեջ գոյություն ունեցող կետերը այն մասին, որ ՀՀ քաղաքացիությունը կորցրած ակադեմիկոսները ավտոմատ կերպով դառնում են ԳԱԱ արտասահմանյան անդամներ:

Բոլոր դարաշրջաններում պետությունների իրոք մեծ ղեկավարները բարձր են գնահատել գիտության նշանակությունը և ամեն կերպ նպաստել են նրա զարգացմանը: Օրինակ, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտը Ֆրանսիայի ինստիտուտի իր անդամությունով պարծենում էր ավելի շատ, քան հաղթանակած ճակատամարտերով:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Քննադատական դիտողությունները պետք է նպաստեն սխալների ուղղմանը և դրանց հետևանքների վերացմանը: Անձամբ ես կարծում եմ, որ ԳԱԱ արդեն վաղուց պիտի առաջադրած լիներ երկրի զարգացման Ազգային ծրագիր տեղական ժամանակաշրջանի համար, և օգտագործելով կառավարության պաշտոնական խորհրդատուի իրավունքները, հասներ դրա պարտադիր քննարկմանը: Նման ծրագրի առաջադրման անհրաժեշտությունն իմ կողմից արտահայտվել է մի քանի տարի առաջ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ամբիոնից: Ես հիմա էլ եմ կարծում, որ բացարձակապես անհրաժեշտ է, որ հնարավորինս արագ մանրակրկիտ մշակել նման ծրագիր և այդ աշխատանքը հանրապետությունում բարձր, պրոֆեսիոնալ մակարդակով, լավագույն ձևով կարող է կատարել ԳԱԱ-ն իր բարձրակարգ մասնագետների մեծ ներուժով: Ներկայումս մշակվում է գիտության զարգացման հայեցակետ: Ամփոս, այդպիսի հայեցակետը նպատակահարմար կլիներ մշակել երկար ժամանակահատվածի համար (օրինակ, 20տարի) երկրի տնտեսական և սոցիալական զարգացման Ազգային ծրագրի շրջանակներում:

Պարոն Գուրգադյանը իր անսանձ ցանկությամբ՝ հիմնովին ոչնչացնել եղածը, «այրել անտառը» և մոխրի վրա կառուցել գիտության տաճարը, ստեղծել «հիմնովին վերակառուցված, երիտասարդացված, առողջ և հզոր Գիտությունների ազգային ակադեմիա (ինչպիսի՝ գեղեցիկ խոսքեր) կոչ է անում երկրի նախագահին և կառավարությանը, ժամանակ չկորցնելով «...ձեռնամուխ լինել ազգային ակադեմիայի ստեղծման գործին, բացարձակ նոր կազմով և նույն կերպ, ինչպես դա տեղի էր ունեցել 1943թ-ի վերջին, երբ ստեղծվել էր Հայաստանի գիտությունների ա-

Երրորդը՝ պ-ն Գուրգադյանը նշված ակադեմիան բերում է որպես օրինակ նոր ազգային ակադեմիայի ստեղծման համար: Բայց չէ՞ որ, այդ ակադեմիայի կազմում կային և գիտնականներ, որոնցից մեկը միայն գիտության թեկնածու էր, իսկ մյուսը՝ ընդհարապես չունեցրեց գիտական աստիճան: Սակայն «գաղափարական» պիտակը պ-ն Գուրգադյանը հիմնադիր-ակադեմիկոսներին չի կացնում: Չորրորդը՝ պ-ն Գուրգադյանը նշում է, որ 1996թ-ի փետրվարի 16-ին ԳԱԱ ընդհանուր ժողովում բոլոր թղթակից-անդամները «մեխանիկորեն, առանց քվեարկության, գրչի մի ծայրով» դարձել են ակադեմիկոսներ: Բայց չէ՞ որ հիմնադիր-ակադեմիկոսները հենց առանց քվեարկության, մի գրչի ծայրով դարձել են ակադեմիկոսներ և ոչ մեկի մտքում, ներառյալ և ակադեմիկոս Գուրգադյանի, ոչ մի անգամ չի առաջացել հարց ակադեմիկոսների բարձր մակարդակի, նրանց համապատասխանության վերաբերյալ: Մինչդեռ, ակադեմիկոս դարձած բոլոր թղթակից-անդամները իր ժամանակ ընտրվել են քվեարկությամբ: Հինգերորդը՝ բոլոր 23 հիմնադիր-ակադեմիկոսները մեկ պետության՝ խորհրդային Միության, քաղաքացիներ էին: Իսկ հիմա պ-ն Գուրգադյանը Հայաստանի կառավարությանը առաջարկում է դիմել արտասահմանյան խոշորագույն գիտնականներին խնդրանքով՝ օգնել նոր Գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծմանը: Վեցերորդը՝ կառավարությանը առաջարկվում է հաստատել ակադեմիայի ընտրված նոր կազմը: Սակայն ո՞վ է ընտրելու ակադեմիկոսներին: Մնում է միայն զարմանալ, ինչպիսի՞ եռանդով պ-ն Գուրգադյանը փորձում է ներքաշել երկրի ղեկավարությանը մի արկածախնդրության մեջ, որի անունն է «Հայաստանի Գիտությունների ազգային նոր ակադեմիայի ստեղ-

ընտրված թղթակից-անդամների միջին տարիքը), իսկ իսկական անդամ՝ 70 և ավելի տարիքում: Ընդ որում, ակադեմիայի անդամ ընտրվում են ցմահ: Ուստի ակադեմիայի անդամների միջին տարիքը սխալ է հաշվի առնել որպես կարևորագույն ցուցանիշներից մեկը Գիտությունների ակադեմիայի կադրերի գնահատման ժամանակ: Եվ սկզբունքորեն որքա՞ն է կոռեկտ այդպիսի հարցադրումը:

Կարևոր հարց է ակադեմիկոսների և թղթակից-անդամների օպտիմալ քանակը: Ի տեղեկություն ակադեմիկոս Գուրգադյանի, ներկայումս Հայաստանի ԳԱԱ-ում ոչ թե 120 ակադեմիկոսներ են, այլ 84 իսկական անդամներ և 18 թղթակից-անդամներ: Կարծում եմ, կարելի էր քննարկել, օրինակ, մի տարբերակ, որի ժամանակ ինչպես իսկական անդամների, այնպես էլ թղթակից-անդամների քանակը սահմանվեր մինչև 50: Իսկական անդամների և թղթակից-անդամների սահմանային թիվը, իհարկե, անհրաժեշտ է ամրագրել ՀՀ ԳԱԱ կառուցողության մեջ: Եթե առաջիկա ընտրության ժամանակ ընտրել միայն մոտ 25 թղթակից-անդամ, ապա հաջորդ ընտրությունների ժամանակ թղթակից-անդամների քանակը կարող է լիովին համալրվել: Ինչ վերաբերում է իսկական անդամների կազմին, ապա առանց որևէ հեղափոխական ցնցումների (գործող ակադեմիայի փակում և նորի բացում), էվոլյուցիոն ճանապարհով շուրջ 10 տարի անց, ակադեմիկոսների քանակը, ամենայն հավանականությամբ, չի գերազանցի 50-ը, եթե նկատի ունենանք, որ մենք բոլորս

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի անդամները պետք է իրենց պարտականությունը, բարոյական պարտքը համարեն փայփայել, աչքի լույսի պես պահպանել Հայրենական մեծ պատերազմի ահեղ ժամանակաշրջանում՝ 1943թ-ի նոյեմբերին հիմնադրված Հայաստանի գիտությունների ակադեմիան: Իսկ ակադեմիկոս Գուրգադյանը, հասցնելով տրամաբանական ավարտին իր մտահայեցական կառուցվածքը, իբր թե ՀՀ ԳԱԱ անդամների ցածր մակարդակի և կործանվող Գիտությունների ակադեմիայի մասին, հասել է մինչև անհեթեթության՝ առաջարկել է ոչնչացնել ներկայիս գիտությունների ազգային ակադեմիան: Կարծում եմ՝ մենք բոլորս լավ պիտի գիտակցենք, որ Գիտությունների ազգային ակադեմիան հայ ժողովրդի պարծանքն է և պիտի ապրի դարերում, իսկ բարեփոխումների իրագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել երկրում գիտության այդ կանաչի հետագա զարգացումը:

Հունիս, 2005 թ.
Երևան

ՄՏՈՐԵՐԿՐՅԱ...

➤ 2 Ավանդությունները համաշխարհային ջրհեղեղի մասին առկա են գրեթե բոլոր ժողովուրդների դիցաբանական պատումներում: Ջրհեղեղի նկարագրությունը այդ պատումներում գրեթե ամբողջովին համընկնում է:

Ըստ Աստվածաշնչի ապոկալիպսիսը կսկսվի «Աստծո ձայնով, որը մենք բոլորս կլսենք»: Եզրապոսիցները Մեծ Սֆինքսին անվանում են «ափի և սարսափի հայր» և նրանք ունեն հավատալիք, որ «Եթե Սֆինքսը հրեռա՝ աշխարհը կցնցվի»: Այս ամենը այլ բան չեն, քան ձայներ ու աղմուկ, որոնք առաջանում են երկրի միջուկի և մանթիայի շփումից: Այդ աղմուկն ու ձայնը լսում են մոլորակի տարբեր վայրերում: Ծովում նման անսովոր ձայն է լսել գերմանացի նշանավոր բնախոյզ Ալեքսանդր Հուբերտը. «1803 թվականի փետրվարի 20-ին, ժամը 18.55-ին ամբողջ անձնակազմը լսեց տարօրինակ մի աղմուկ, որն հիշեցնում էր թմբկահարություն»:

Բնախոյան այդպիսի ձայները կոչում են «Մարինա», Հաբիբի կոչումը՝ «հոուֆֆեր»: Աշխարհագրագետ Մ. Ռյուտոն, որն ուսումնասիրել է այս երևույթը, ենթադրել է, որ այդ ձայները արձակում է երկիրը, և այդ ձայները համեմատել է այն հարվածի հետ, որ ներքին հեղուկ զանգվածը ներսից կարող է հասցնել երկրակեղևին»:

Ի՞նչ է մեզ սպասում մոտալուտ ապագայում: Ի՞նչ հետևանքներ կունենա երկրի առանցքի տեղաշարժերը:

Երկրի միջուկի երկրազոնի մանթիային մոտենալու դեպքում կաճի երկրաշարժերի, երաբուխների թիվը: Կավելանան ցունամիները, հատկապես այն տարածքներում, որոնք գտնվում են երկրակեղևի Հնդկական և Խաղաղ օվկիանոսային բեկվածքի հարևանությամբ: Կոխվի երկրի կլիման: Հրաբխային զազերի և փո-

շու արտանետումը կաղտոտի մթնոլորտը, և կնվազի Արևից մեզ հասնող ջերմությունը: Միջուկի և մանթիայի շփման հետևանքով կսկսվեն երկրի մակերևույթի կործանարար փոփոխություններ՝ իջվածքներ և մակերևույթի բարձրացումներ: Կառաջանան ամենի ալիքներ, որոնք իրենց ճանապարհին կսրբեն-կտանեն ամեն ինչ:

Կապույտ մոլորակի վրա կյանքի գոյությանը սպառնացող վտանգը միանգամայն իրական է: Կանխել խոշորագույն այդ կործանարար աղետը անհնար է: Ժամանակը չէ արդյո՞ք ձեռնամուխ լինելու Նոյան նոր տապանի շինարարությանը: Այս հարցին մենք խնդրեցինք պատասխանել Ռուսաստանի Դաշնության երկրաշարժերի կանխագուշակման փորձագիտական խորհրդի նախագահ, ՌԴ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ալեքսեյ Նիկոլաևին:

- Մեր մոլորակի ստորերկրյա կյանքը իսկապես բազում հանելուկներ ունի պահած: Սակայն սարսափի մատմուկելու պատճառներ առաջին չկան: Երկիր մոլորակի պտտման պարագիծը մի անգամ չէ, որ փոխվել է: Օրինակ, Հարավ-Արևելյան Ասիայում վերջին երկրաշարժի արդյունքում երկրազոնի առանցքը տեղաշարժվեց 3 սանտիմետրով, երկրի պտտման արագությունը աճեց, իսկ օրվա տևողությունը նվազեց 3 միկրոկայրյանով: Նման աննշան թվերը չեն կարող նկատելիորեն ազդել կլիմայի վրա, առավել ևս՝ առաջ բերել նոր գլոբալ ավերածություններ: Այն արագությունը, որով երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը, հաստատուն չէ: Գոյություն ունեն

պտտման սեզոնային և անգամ օրական տարբերություններ, որոնք կապված են ընդերքում կատարվող պրոցեսների, օդային զանգվածների և ծովային հոսանքների շարժման հետ: Յուրաքանչյուր ամիս առանցքը տեղաշարժվում է մոտ մեկ մետրով և դրանում մահացու ոչինչ չկա: Պետք չէ նաև խուճապի մատնվել երկրի մագնիսական դաշտի փոփոխությունների համար: Դա մեր կապույտ մոլորակի վրա բնականոն, դինամիկ պրոցես է:

Առաջիկա չորս միլիարդ տարում, իսկ մեր Արեգակը դեռ հենց այդքան պետք է վառվի, կարելի է հանգիստ և անխռով ապրել:

Աննա ՊԻՄԵՆՈՎԱ
«Նեգավիսիմայա զագեյա»

Գիտություն

Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՍՈՒՐԱՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24դ,

հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 27.10.2005թ.

"ГИТУЮН" ("Найка") газета НАН РА